

ՃՃԻՆ

(Շար. Ա. ԹԻԼԵՆ ԵՆ ՎԵՐՋ)

Մարդուն աղիքներուն մէջ կը գտնուին տարբեր տարբեր որդեր: Բայց երեք տեսակները գլխաւորաբար կ'ապրին մեր աղիքներուն բարեխառն մթնոլորտներուն տակ: Ասոնք են ճճին (սօղուճան-ascaride), երիզորդը (շէրիտ) եւ բարակ որդը (oxyure): Վերջին երկուքի մասին պիտի խօսինք ուրիշ առթիւ:

Առաջինը, որ էն կարեւոր տեղը կը բռնէ Արեւելքի ժողովուրդներուն համար, սօղուճանն է, կլոր ճճի (ascaride): Սօղուճանը երկայն ու կլոր է, երկու ծայրերը սուր, 15էն 17 սանդիմեղը երկայնութեամբ. գոյնը ճերմակ: Կ'ապրի ու կը շարժի աղիքներուն մէջ:

Այս ճճին կը մտնէ աղիքներուն մէջ, եթէ կլլենք անոր հաւկիթները, որոնք կը գտնուին ջուրին մէջ, բոյսերու ու հողին վրայ: Այս հաւկիթները կը գտնուին որդ ունեցող տղոց կղկզանքներուն մէջ:

Ուրեմն, չունենալու համար պէտք է նախ զոռուլթիւն ընել որ որդ ունեցող տղաք չպարսպեն իրենց աղիքները փողոցները, ինչպէս կ'ընեն Արեւելքի մէջ, այլ կանոնաւորապէս արտաքնոցներու մէջ: Յետոյ հողի դպած կանանչեղէն կամ պտուղ չուտն, առանց նախապէս մաքրելու անարատ ջուրով: Ուշադրութիւն ընել որ տղաք երբ հողին վրայ կը խաղան, ձեռքերնին բերաննին չտանին: Ճաշերէ առաջ մաքուր ջուրով ու օճառով լուալ ձեռքերը: Այս նախնական զոռուլթիւններով տղաք դերծ կը մնան ծնողքներուն այնքան սարսափ պատճառող սօղուճանէն:

Որդերը որոնք կ'ապրին աղիքներու մէջ, որոշ թիւով մը երկու, չորս, տասը եւ աւելի կ'ածեն շատ մեծ թիւով հաւկիթներ, բայց այդ հաւկիթները չեն կրնար նոր որդերու կեանք տալ նոյն աղիքին մէջ, որովհետեւ հոն չեն գտներ նոր կեանք առնելու պայմանները: Այդ հաւկիթները երբոր աղիքներէն դուրս գան, նոր միջավայրի մը պէտք ունին հասուննալու համար: Այդ հասունացումը կ'ըլլայ մարդկային աղիքներէ դուրս: Այս կէտը կարեւոր է:

Զեմ կրցած դեռ համոզել իմ ազգակիցներս թէ սօղուճանին հաւկիթները չեն կրնար անմիջապէս եւ նոյն անձին մօտ ծնունդ տալ նոր սօղուճաններու: Նախ պէտք է աղիքներէն դուրս գան, բաց օդին՝ խոնաւ տեղեր ժամանակ մը ապրին, որպէսզի կարենան՝ եթէ նորէն մտնան մարդուս ստամոքսին մէջ՝ սօղուճանի փոխուի:

Սօղուճանները կը գտնուին գլխաւորաբար պզտիկ գիւղերու

մէջ ուր մաքրութիւնը զոյութիւն չունի, ուր փողոցները աղտոտ են ու այս աղտոտութեան մէջ կը խաղան պղտիկները: Այդ ճճիւնները կ'ապրին աղիքներուն մէջ ոչ թէ արիւն ծծելով, այլ աղիքներու մէջ գտնուող սնունդով: Եթէ շատ է անոնց թիւը, դիւրին է հասկնալ թէ այս տեսակ ու բազմաթիւ որդեր ունեցող տղայ մը ինչու կը տկարանայ:

Որդերուն յառաջ բերած ախտանշանները շատ են ու շատ անկանոն: Մէկուն քով ստամոքսի խանգարում կուտան: Ուրիշի մը ախտորժակը կը սրեն եւ կամ կը զօցեն: Ոմանք իրենց փորին մէջ ցաւեր ունին, որոնք յանկարծ կը սկսին ու նոյնպէս յանկարծ կը դադրին: Աղիքները կրնան խանգարումներ ունենալ ու բորբոքումի նշաններ տալ: Կոյր աղիքը կրնայ՝ իր կարգին՝ վտանգուիլ եւ կուրագետապ (appendicite) առաջ բերել:

Որդերը շատ ջղային տղայոց քով կրնան ջղային մանր խանգարումներու պատճառ ըլլալ: Բայց բոլոր այդ նշանները չեն կրնար կռահել տալ բժիշկին որ սօղութեան է այս աղէտներուն պատճառը: Էական նշանը որդը ինքն է: Այն տղաք որ այս տեսակ ու բոլորովին անկանոն նշանները ունին, կրնան օր մը որդ թափել ու այն ատեն ամէն բան կը պարզուի: Այդ վայրկեանէն տղան աղէկցած է: Որովհետեւ եթէ այս այլազան նշաններուն պատճառը որդն էր, աղիքներէն անոր վտարումը բժշկական շատ պարզ գործողութիւն մըն է որ մէկ կամ երկու ժամ կը տեւէ, ու անկէ յետոյ հիւանդը բոլորովին կ'աղէկնայ:

Հետեւաբար, երբ ծնողքներ կուզան ու մեզի կը պատմեն թէ արդէն տուած են որդի դէմ դեղեր, թէ որդը ինկած է, բայց տղան չէ աղէկցած, պէտք է փնտռենք ուրիշ հիւանդութեան մը նշանները: Եթէ ծնողքը կը պատմէ թէ չորս կամ ութ անգամ տարբեր տարբեր դեղեր տուած են ու որդը երբեք չէ ինկած, ու laboratoirere չգտնէ որ եւ է ճճիի հաւելիթ տղուն կղկղանքին մէջ, պէտք է եզրակացնենք թէ տղուն հիւանդութեան պատճառը որդը չէ:

Եթէ ծնողքը նորէն չհամոզուի ու նորէն պոռայ. «Տոքթէօր, որդի դեղ տուր, որդի դեղ», պէտք է համոզուին թէ ծնողքն է հիւանդը, հիւանդութեան վախէն (phobie) բռնուած:

* * *

Սօղութեանին դէմ ունինք հրաշալի գէնքեր, semen contra կամ santonine, առանձին եւ կամ calomelով: Ոչ մէկ ճիւղային սօղութեան կրնայ դիմանալ santonineի ու colomel ին:

Մենք բժիշկներս որ գիտենք այդ դեղերուն ազդեցութիւնը ճճիւններուն վրայ, կը զարմանանք տակաւին թէ ինչպէս մեր հայրենակիցները անոնցմէ կը սարսափին: Արդեօք Արեւելքի ճճիւնները դիտութիւնէն դուրս ահադին ճիւղներն են զորս մենք չենք ճանչնար:

Ո՛ւր է ճշմարտութիւնը: Անոնց ուղեղն մէջ թէ տղոց աղիքներուն մէջ:

ԲԺԿ. Պ ՔՕԼՕԼԵԱՆ